

ԳԻՏԱԿԱՆ ՍՍՐԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ

«ՀՈՎՀԱՆՆԵՍ ԻՄԱՍՏԱՍԵՐԻ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ»¹

Հաղրատ և Մանահին զույգ վանքերը, իրրե հայ արվեստի տիպիկ հուշարձաններ, գրեթե միաժամանակ են հիմնադրվել՝ 10-րդ դարի երկրորդ կեսին և գրեթե միաժամանակ էլ՝ 11-րդ դարից՝ վերածվել զպրկվանքերի կամ, ավելի ճիշտ, միասնական գրական-գիտական զպրոցի: Այդ զպրոցը զգալիորեն ծաղկեց 12—13-րդ դարերում, տալով իր ճյուղավորությունները՝ Խոռակերտ, Հաղարծին, Գետիկ, Եոր-Գետիկ կամ Բոջավանք, Խորանաչատ և այլն:

Ահա թե ինչու հայ և վրաց մատենագիրները այլ կերպ չեն հիշատակում այս հուշարձանները, քան որպես երկվորյակներ: Այդպես են հիշատակում՝ մի կողմից՝ Ասողիկը, Սամվել Անեցին, Գրիգոր Տուտեորդին, Գրիգոր Տղան, Վարդան Արեւելցին, Կիրակոս Գանձակեցին և ուրիշներ, իսկ մյուս կողմից՝ Վախուշտի և Իսանե Բագրատիոն արքայազուները, Պապունա Օրբելիանին, անանուն հնագետը և այլն:

Անկասկած, այս պատճառով է, որ Հովհաննես վ. Սուրենյան Ղրիմեցին 19-րդ դարի առաջին կեսին այդ երկու վանքերի վիմական արձանագրությունները ամփոփում է մի գրքում, որը հրատարակում է ակադ. Մ. Բրոսսեն, իսկ Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի»-ում կարգում ենք. «Ով, սուրբ լերինք, ձորք, Հախպատ, Մանահին»:

Միանգամայն իրավացի էր և Ս. Վ. Տեր-Ավետիսյանը, երբ գրում էր. «Առանց Հաղրատի հասկանալի չէ Մանահինը և առանց Մանահինի Հաղրատը, այդ երկու վանքերը պատմության համար մի ամբողջություն են կազմում»:

Հաղրատ-Մանահինյան գրական-գիտական զպրոցում 12-րդ դարի առաջին կեսին ծաղկում է Գանձակեցիների խումբը՝ հանձին Հովհաննես Սարկավազ վարդապետի, Գրիգոր Թոքակերի որդու և Դավիթ Այավա որդու, որոնցից, սակայն, ներքոգրը միայն անունով է հայտնի՝ առանց գրական վաստակների հիշատակության, երբեք իրրե «Կանոնագրքի»՝ հեղինակ, որը միայն վերջերս (1953) հրատարակվեց Աշ. Արրահամյանի կողմից. առաջինի՝ Հովհաննես Սարկավազի՝ րավական հարուստ գրական-գիտական մատանգությունը վաղուց սպասում էր հրատարակվելու:

Այս շնորհակալ գործը իրագործում է պրոֆ. Աշ. Արրահամյանը և Հովհաննես իմաստասերի մատենագրությունը՝ գրքով, որ հրատարակել է Երևանի Մսրտոտի անվան պետական համալսարանը:

Երախտովոց գիրքը բացվում է րավական բնդարձակ առաջարանով

¹ Ա. Բ. Արրահամյան, Հովհաննես իմաստասերի մատենագրությունը, Պետ. համալսարանի հրատարակչություն, Երևան, 1956, 372 էջ:

² Եվ ոչ թե «Կատաստանագրքի», ինչպես Աշ. Արրահամյանն է անվանում (էջ 29):

(էջ 5—11), որին հետևում է Հովհաննեսի կենսագրության փորձը (էջ 13—33), ապա տրված է Հովհաննեսի աշխատությունների ընդհանուր բնութագիրն ըստ ճյուղերի՝ պատմագրական (էջ 34—41), մաթեմատիկական և տիեզերագիտական (էջ 42—64), տոմարական (էջ 65—100), բանաստեղծական (էջ 101—110) և փիլիսոփայական (էջ 111—115)։

Դրքի հիմնական մասը կազմում են «Տեքստերը», որոնք դասավորված են 32 գլուխներում (էջ 119—349)։

Վերջում տրված է ամփոփում ուսերեն (էջ 351—356) և անգլերեն լեզուներով (էջ 356—361), ինչպես և անվանացանկ (էջ 362—369)։

Առաջարանում, մի առ մի հիշելով իրենից առաջ Հովհաննեսի խնդրով դրադվողներին (Ղ. Ալիշան, Մ. Արեղյան, Ե. Տեր-Մինասյան, Հ. Ոսկյան, Լ. Մելիքսեթ-Քեկ և ուրիշներ), պրոֆ. Աշ. Արրահամյանը գրում է. «Կարելի է ընդարձակել Հովհաննեսի առանձին աշխատություններով դրադվող ուսումնասիրողների ցանկը, սակայն, վերևում հիշված ուսումնասիրողների հիշատակումը բավական է համոզվելու համար, որ Հովհաննես իմաստասերը հայ մատենագրության ինչ-որ կորած, երկրորդական դեմք չէ, և մենք մեր ներկա հատորով Ամերիկա չէ, որ բաց ենք անում» (էջ 8)։ Եվ ապա. «Ծիշտ է, իմաստասերի մատենագրությունից մինչև այժմ քիչ բան է հայտնի եղել, սակայն այդ քիչն էլ այնքան բարձրորակ գործեր են եղել, որ նրա կողքից անուշադիր չեն անցել հայագիտության մեր աչքի ընկնող ներկայացուցիչները» (նույն տեղում)։

«Ուսումնասիրելով Հովհաննեսի հայտնի ու Մատենադարանի ձեռագրերում նորահայտ աշխատությունները՝ մենք,—գրում է Աշ. Արրահամյանը,—դասավորեցինք նրանք¹ ըստ առանձին տեսակների՝ կենսագրական, պատմական, մաթեմատիկական, տիեզերագիտական, գրական և փիլիսոփայական» (էջ 10)։

Միաժամանակ՝ Հովհաննեսի մատենագրության հրատարակիչը նախազգուշացնում է ընթերցողին. «Մենք բաց ենք թողել Հովհաննեսի կրոնա-բարոյախոսական բովանդակությունն ունեցող աշխատությունները», քանի որ «նրանք մենք նպատակ ունենք հրատարակել առանձին հատորով» (նույն տեղում)։

Այս հանգամանքը շեշտված է նաև «Տեքստեր» բաժնի 8-րդ գլխի 1-ին ծանոթագրությունում, որտեղ ասված է, որ Հովհաննեսի զույգ երկասիրությունները, այն է հայաստանի Մատենադարանի № 2751 ձեռագրի էջ 221ր—235 և 235ր—243ա, «որոնք ավելի կրոնական բովանդակություն ունեն», բաց են թողնված՝ «դետեղելու այն հատորում, որը կսարունակի իմաստասերի կրոնական գործերը» (էջ 147)։

Բացի այս ամենից, «Վերջարանի փոխարեն» վերնագիրը կրող երկտողում նշված է, որ այսպես կոչված «Ղեկնդյանց ճառը» նպատակահարմար համարվեց «տեղափոխել կրոնական նյութերի հետագայում հրատարակվելիք հատորի մեջ» (էջ 350)։

Չնայած այսպիսի հայտարարություններին, գրախոսվող հատորի մեջ տեղ է գտել «Հակարանութիւն հնագիտական» գրվածքը (էջ 140—147), որը կրոնա-դավանաբանական բնույթ է կրում։

¹ Ընդգծումն այստեղ և սուրե մերն է.—Լ. Մ.-Բ.։

«Հովհաննես իմաստասերի կենսագրությունը» վերնագիրը կրող գլխում պրոֆ. Աշ. Արրահամյանը նպատակ է դնում տալ իմաստասերի ճշտված կենսագրությունը համաձայն սկզբնագրյունների տվյալների և բանասերների կոահումների:

Հեղինակը հավանական է գտնում, որ «Հովհաննեսը ծննդյամբ Գանձակի Փառիսոս գավառից է», միաժամանակ՝ նրա «մարմնական սննդեան» վայրն է հանդիսացել Անին, իսկ «հոգևոր սննդեան» վայրը՝ Հաղրատը (էջ 21): Մի ժամանակ «Հովհաննեսն Անիի կաթողիկե եկեղեցու ծխական քահանան է հանդիսացել» (էջ 27), երբ և գրել է իր գիտական գործերը. ապա նա դարձել է վանական, նույնիսկ վարդապետ, և «կրոնական գործերի մեծ մասը գրել է ծերության շրջանում», Հաղրատում միաբանած ժամանակ» (էջ 30):

Պրոֆ. Աշ. Արրահամյանը համաձայնվում է Ն. Ալիշանի տված բացատրության հետ՝ թե Հովհաննեսը ինչու է Սարկավագ կոչվել. «Մրովհեսե Հովհաննեսը փոքր տարիքից սարկավագություն է ստացել և երկար մրնացել այդ աստիճանում, քահանայի համար հասուն տարիք չունենալու հետևանքով», ուստի և «Սարկավագ կոչումը նրա համար դարձել է մականուն» (էջ 24): «Որ Սարկավագ կոչումը, իրոք, Հովհաննեսի համար ոչ թե աստիճան է հանդիսացել, այլ մականուն, այդ երևում է և նրա կենսագրականի հետևյալ տողից. «Վարդապետն Յովհաննէս և անուն բարդ Սարկավագ» (նույն տեղում):

Մական, բացի «Սարկավագ» և «Վարդապետ» կոչում-հորջորջումներից, Հովհաննեսը հայտնի է եղել նաև իբրև սոփեստոս, փիլիսոփա, իմաստասեր, հոեւոր և այլն (էջ 5, ծան. 1, էջ 25, 111):

Նկատի առնելով այս հանգամանքը, մեր հեղինակը գրում է. «Նրա (Հովհաննեսի) ստեղծագործությունամբ զբաղվող գիտնականները, ըստ նախասիրության, իրենց ուսումնասիրությունների մեջ գործ են ածել այս մականուններից մեկն ու մեկը: Նկատի ունենալով, որ Հովհաննեսն իր գրական վաստակով, մտքի խորությամբ փիլիսոփա մտածող է, խոհուն գիտնական և ժամանակակիցները մեծ մասամբ հիշում են «Իմաստասեր» մականունով, ուստի և հարմար դատեցինք նրա անվան հետ գործածել իմաստասեր մականունը: Կարծում ենք, որ այս ավելի համապատասխանում է մեր մեծավաստակ հեղինակի գիտական ուղղությանը, քան մյուս մականուններից որևէ մեկը» (էջ 5, ծան. 1):

Իսկ մենք, համամիտ լինելով Ն. Ալիշանին, ավելի հարմար ենք գտնում վերապահել Հովհաննեսին «Սոփեստոս» հորջորջումը, ինչպես կոչել են ժամանակակիցները նրա գերեզմանաքարի արձանագրության մեջ:

Մեր հեղինակը մատնանշում է, իմիջիայլոց, մի կարևոր հանգամանք, այն՝ որ «Հովհաննեսը Հաղրատում կրթությունն ավարտելուց հետո եկել է Անի և այնտեղ դպրոց հիմնել, որը, ինչպես երևում է, շատ խոշոր դեր է խաղացել միջնադարյան Հայաստանում» (էջ 25): Ապա նա աշխատում է տալ Հովհաննեսի աշակերտների ցանկը՝ Երեմիա Անձրեկի, Սամուել քահանա Անեցի, Սարգիս, Խաչատուր Անեցի, Բրիգոր Անեցի, Հովհաննես Անեցի, Ստեփանոս Ջոմգումա (էջ 29):

Այս ցանկը համընկնում է մեր կազմած ցանկի հետ (Վարդապետք հայոց հիւսիսային կողմանց, 1928, էջ 109—172, և տախտակ 1-ին), միայն Տեղեկագիր 4—9

այն տարրերով յամբ, որ Սարգիս անվանը կցված չէ վերջինիս «Գունտ» մականունը, ինչպես այն նշված է համապատասխան հիշատակարանում (հմմտ. Ղ. Ալիշան. Հայապատում, 2-րդ, 371): Բացի դրանից, Սամուել և Գրիգոր Անեցիների կողքին չի հիշատակվում Մխիթար Անեցին:

Պրոֆ. Աշ. Արրահամյանը միանգամայն իրավացի է, երբ շեշտում է, որ «Հովհաննես Սարկավագին չպետք է շփոթել համանուն այլ Հովհաննեսի կամ «Սարկավագ» մականուն ունեցող անձնավորությունների հետ, որովհետև այդ անունով և մականունով մի շարք հեղինակներ են հայտնի հայ մատենագրության մեջ: Մասնավորապես, «Հովհաննես Սարկավագին չպետք է շփոթել Ղ. Ալիշանի «Շիրակ»-ում հիշած Սարկավագի (սխալեցող Կաթողիկէի՝ Անոյ) հետ», քանի որ «վերջինիս հիշատակության թվականն է 1286» (էջ 27, ծան. 2):

Գտնելով, որ Հովհաննեսի մահվան թվականը վիճելի է (էջ 30), գրքի հեղինակը «Հովհաննես իմաստասերի կենսագրությունը» գլխի վերջում կանգ է առնում նաև այդ խնդրի լուսարանության վրա, համաձայնվելով նրանց (որոնց թվում և մեզ) հետ, որ նա վախճանվել է 1129 թվականին (էջ 31—33):

Ձեռքի տակ չունենալով ձեռագրական այն նյութերը, որ հիմք են հանդիսացել պրոֆ. Աշ. Արրահամյանի հրատարակության համար, մենք, դժբախտաբար, իմիճակի չենք որևէ բան ասելու բուն տեքստերի ընդօրինակման որակի մասին: Սակայն, օգտվելով առիթից, կուզեինք մի քանի դիտողություն անել այս շահեկան գրքի մասին ընդհանրապես:

1. Եթե Հովհաննեսը իմաստասեր-փիլիսոփա է բառիս իսկական իմաստով, հապա ինչով բացատրել, որ մեր հեղինակի ուշագրությունից վրիպել է նրա՝ Հովհաննեսի՝ գլուխ գործոցը, այն է «Կարգագրություն» գրոց սըր-րոց»-ը, որը որքան էլ կրոնական, նույնքան էլ փիլիսոփայական գործ է, նվիրված գրոց դասակարգման խնդրին, նման հունական «կատեններին» և Գրիգոր Արաստորդու «Պատճառաց գրքին», այսինքն «Liber de causis» կամ «Liber causarum»-ների շարքին: Եվ մի՞թե Հովհաննես իմաստասերի մատենագրությանը նվիրված գրքում չպիտի խոսվեր, թե ի՞նչ է իրենից ներկայացնում այն երկասիրությունը, որը ցուցակագրված է (բայց դեռևս չի հրատարակված) հետևյալ ընդարձակ վերնագրով. «Կարգագրություն» գրոց սըրոց, որք ստուգաբանեցյալն ի Սարկավագ վարդապետէն և գրեցան յինէն՝ ի տէր Մխիթար վարդապետէս պատմագրէ ի մին տուփ դաւուրս ՃՀ» (հմմտ. Ն. Ալիշան, Մատենագրական հետազոտություններ, Վիեննա, 1922, էջ 34—43, Հ. Ոսկեան, Մատենագրական քննություններ, Վիեննա, 1926, էջ 36. Լ. Մելիքոթ-Բեկ, Վարդապետք հայոց հիւսիսային կողմանց, Խրիլիսի, 1928, էջ 143):

2. Նշելով Հովհաննես իմաստասերի դերը հայ կուլտուրայի քնադավա-ռում, իրրև դրական-գիտական գալրոցի հիմնադրի, որն ունեցել է ընկեր-ներ, ընկերակիցներ և աշակերտներ-հետևորդներ, մեր հեղինակը ոչ մի խոսք չի ասում 12-րդ դարի առաջին կեսի իրերի գրության մասին, երբ հայ մտավորականությունը հարկադրված էր իդեոլոգիական պայքար մղել հույն-բյուզանդական և հարակից քաղկեդոնիկ մտայնության ոտնձգությունների դեմ: Երկու ճակատով մղվող այդ պայքարը ծանրացավ դույզ գաղափարա-կից-գիտակիցների ուսերի վրա. դրանցից մեկը՝ հյուսիս-արևելյանը՝ գլխա-

վորում էր Հովհաննես Սարկավազը, իսկ մյուսը՝ հարավ-արևմտյանը՝ Պողոս Տարոնեցին (տե՛ս մեր «Վարդապետք հայոց» և այլն, էջ 160—162)։

3. Հովհաննեսին նվիրված հատուկ ուսումնասիրության մեջ, ինչպիսին է գրախոսող զիրքը, ավելորդ չէր լինի շեշտել միջնադարյան հայ խոշոր գիտնականի մեծ համբավն ու բարձր հեղինակությունը Վրաց աշխարհում։² Եր «Վասն շարժման և սասանութեան երկրի» երկասիրությունը Հովհաննեսը գրել է մի ինչ-որ Վրաց եպիսկոպոսի խնդրանք, ուստի և այն սկսվում է «Հարցմունք Վրաց եպիսկոպոսի» բառերով։ Նմանապես, չի նըշված այն փաստը, թե ինչպես Դավիթ Վրաց թագավորը պարգևեաց նա (Հովհաննեսին) գեաղ առնթեր վանացն (Հաղբատայ) ի ծառայութիւն նա (ըստ վրաց տարեգրության հին-հայերեն թարգմանության)։ Վերջապես, ինչպես կարելի է անուշադիր թողնել Դավիթ թագավորի անանուն պատմիչի վկայությունը, որ 1123—1125 թթ. միջոցին Թրիլիսիում գումարված միտանական հայ-վրացական եկեղեցական ժողովին հայերից ներկա են եղել «բազմաթիվ եպիսկոպոսներ և վանքերի առաջնորդներ, որոնք պարծենում էին նրանով, թե ինչպես նրանք հասել են ամենայն ուսմանց և գիտության գագաթնակետին» (տե՛ս մեր «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 1-ին, 219, նույնը ՏՃԵԿԼԱԳԻՐ ՀՍԹՈՒ ԳՈՒՄ, 1943 թ., № 1, էջ 76)։ Թվում է, որ գծվար պիտի լինի ժխտել, որ վրաց պատմիչի այս վկայությունն առաջին հերթին վերաբերում է Հովհաննեսին։

4. Որ Հովհաննեսը, իբրև վանական և վարդապետ, Հաղբատում եղած պահին իրոք զառամյալ ծերության հասակին է եղել հասած, սրա ապացույցն է վրաց տարեգրության հին-հայերեն թարգմանության վկայությունը, թե ինչպես Հովհաննեսը՝ գիմելով Դավիթ թագավորին (1123—1125 թթ. միջոցին)՝ ասել է. «Լուծեալ եմ և հոտեալ ի ծերութեան ես. ի բաց գնա յինէն, զի մի աշխատ լիցիս»։

5. Դավիթ Վրաց թագավորը (1089—1125) վրացերեն կոչվում է «Աղմաշենեբելի», որ պիտի թարգմանվի «Շինող», ուսերեն «Строитель», ճիշտ այնպես, ինչպես Ներսես Իշխանցի կաթողիկոսը կոչվում է «Շինող»։ Իսկ «Վերաշինող» հորջորջումը, որ սովորաբար գործածում են մերոնք և սրանց թվում մեր հեղինակը (էջ 5), ուսերեն «Возобновитель»-ի թարգմանությունն է, որը հիմնովին սխալ է, ուստի և պիտի խուսափել նրա գործածությունից։

6. Հովհաննեսի տապանագրի մեր հեղինակի ընթերցումն (էջ 33).

«Արձանս այս սեմական է
Սուրբատոսի Սարկաւագին»

ճիշտ չէ. պիտի ուղղել.

«Արձանս այս սեմական է Սուրբ-
ատոսի Սարկաւագին. Դ »

(տե՛ս մեր «Վարդապետք հայոց հիւսիսային կողմանց», էջ 131)։

Դ = 600 (1151) թվականը, իհարկե, ոչ թե Հովհաննեսի մահվան տարեթիվն է, այլ արձանի կանգնեցման և օրհնությունը։

7. Գրքի հեղինակը սխալվում է, երբ՝ խոսելով Հովհաննեսի դամբանի մասին՝ նշում է, թե իբր «հետագայում նրա (Հովհաննեսի գերեզմանի վրա»¹

¹ Ընդգծումը մերն է.—Լ. Մ.—Բ.։

Համազասպ եպիսկոպոսը զանգակատուն է կառուցել» (էջ 32): Թվում է, որ այս դեպքում գործ ունենք մի ինչ որ թյուրիմացություն հետ, քանի որ Հաղրատի զանգակատունը կառուցված է ոչ թե Հովհաննեսի գերեզմանի վրա, այլ գերեզմանին և առհասարակ Հաղրատյան պանթեոնին կից, ինչպես այդ պարզ երևում է մեր «Վարդապետք հայոց հիսիսային կողմանց» գրքի 53 էջում տրված լուսանկարում:

8. Ամիսների ցանկը, որ տրված է Հովհաննեսի համապատասխան գործում 14 լեզվով (էջ 74, 80), անկասկած, աղավաղված է հետագա արտագրիչների կողմից. հետևապես, այն կարոտ է սրբագրման: Օգտվելով առիթից, մենք կուղեինք ճշակել ցանկի վրացական մասը, որը պիտի կարգացվի այսպես.

- ախալծլիսա
- սթուլիսա
- տիրիսկոնի
- տիրիսկենի
- ապանի
- սուրձղունիսի
- միրկանի (= մեհեկի)
- իգրիկա (= արեգ)
- վարդորիսա (= վարդ...)
- մրիալիսա (= մարերի)
- թիրիսա
- քվելթոթիսա

(հմմտ. Սարա-Սուլիսան Օրբելիանու լատարանը. հրատ. 1884, 1928 և 1949 թթ. «Թթվե» բառի ներքո, նաև Պ. Ինգորոզվայի ուսումնասիրությունը՝ «Հին վրացական օրացույցը». Վրաստանի պետ. թանգարանի «Տեղեկագիր», 7-րդ, 1933, էջ 260—336, վրացերեն):

9. Ստվար հատորում, ինչպիսին է գրախոսվող գիրքը, բնական է, որ կարող են նկատվել սրբագրական թերություններ, որոնցից կհիշատակենք մի քանիսը.

- | | | |
|--------------------------|----------|--------------------|
| — ակադ. Յա. Մառ (էջ 14). | ուղիղ՝ | ակադ. Ն. Յա. Մառ. |
| — Տաշիրս | (») | » » Տաշիր |
| — Արտանուշ | (էջ 15) | » » Արտանուշ |
| — Սաճմաղին | (էջ 16) | » » Սաճմաղին |
| — Զոդումա | (էջ 124) | » » Զոճոմա |
| — Երմիա Անձրևիկ | (» ») | » » Երեմիա Անձրևիկ |

և այլն:

10. Լավ կլիներ, եթե ակադ. Հ. Մանանդյանի «О торговле и городах Армении» գիրքը օգտագործվեր ոչ թե 1930 թ. հրատարակությամբ (էջ 13, ծան. 2), այլ 1954 թ., նաև Հ. Ոսկյանի հոդվածները նշվեին ոչ թե ըստ «Հանդէս ամսօրեայ»-ի 1925—1926 թթ. կոմպլեկտների, այլ ըստ «Ազգային Մատենադարան»-ի սերիայի № 112 (Վիեննա, 1926) առանձին հրատարակությամբ:

Ի վերջո, մի նկատողություն ևս, որ անձամբ մեզ է վերաբերում: Պոսելով Հովհաննես իմաստասերի «Անկիւնավոր թմբ»-ի մասին, որոնք «միջանկյալ և կցկտուր են», պրոֆ. Ա. Սիրահամյանը գտնում է ոչ «գարմանալի», «որ ոչ ոք նրանց վրա առանձին ուշադրություն չի դարձրել» (էջ 43): Այսպիսի անձանց շարքին նա դասում է, իմիջիայոց, և մեզ, որն՝ «ուսումնասիրելով Հայաստանի և Վրաստանի գրական գիտությունների պատմությունը, տեղեկություն չի ունեցել և ոչինչ չի գրել Հովհաննեսի նշված աշխատության մասին իր Հայաստանի և Վրաստանի գրական գիտությունների շուրջը» վերադառնալով արժեքավոր ուսումնասիրության մեջ (էջ 43—44):

Սակայն հարգելի հեղինակը ինքն իրեն հակասում է, երբ հետևյալ էջում (45) նշում է, որ «Անկիւնավոր թմբ»-ի «տեքստը տոմարի հետ միասին հիշատակված է» Ե. Տեր-Մինասյանի համապատասխան հոդվածում (1901), ինչպես նաև մեր «Վարդապետ» հայոց հիւսիսային կողմանց գրքում (1928) և մեծանուն Հր. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարան»-ի 3-րդ հատորում (1946):

Հետևապես, Հովհաննես իմաստասերի «Անկիւնավոր թմբ» գործը մենք օգտագործել ենք մեր համապատասխան աշխատության մեջ գեոևս 1928 թվականին: Իսկ թե ինչու 1930 թվականին մի ուրիշ աշխատության մեջ դրա մասին լռել ենք, դա բոլորովին ուրիշ խնդիր է:

Չնայած նշված թերություններին, կասկածից դուրս է, որ «Հովհաննես իմաստասերի մատենագրությունը» նշանակալի ներդրում է հայագիտության բնագավառում, որից հավասար չափով պիտի օգտվեն հայագետ-պատմաբանները, բանասեր-գրականագետները, լեզվաբանները, ճրչվրիտ գիտությունների մասնագետները, փիլիսոփաները և այլն:

Լ. Մելիքսեթ-Յեկ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՊԱՐՍԿԵՐԵՆ ՀՐՈՎԱՐՏԱԿՆԵՐԻ 1-ԻՆ ՊՐԱԿԸ

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Ձեռագրատունը (Մատենադարանը), որը աշխարհի խոշորագույն ձեռագրատներից մեկն է, իր հարուստ ֆոնդերում ունի նաև մեծաքանակ արարատառ (արաբերեն, պարսկերեն, ադրբեյջաներեն և թուրքերեն) ձեռագրեր, որոնք հսկանյութ են տալիս Հայաստանի և Մերձավոր Արևելքի երկրների կուլտուրաների ուսումնասիրության համար:

Մատենադարանը շնորհակալության արժանի աշխատանք է կատարում հրապարակելով և լայն մասսաների սեփականությունը դարձնելով հեռավոր դարերից մեզ հասած այդ մեծարժեք մատենագրական հուշարձանները: Մինչ այժմ զգալի աշխատանք է կատարվել հայ մատենագրերի հրապարակման ուղղությամբ: Սակայն պարսկական ձեռագրերից և արխիվային վավերագրերից դեռևս ոչինչ չէր հրապարակված:

1956 թ. յույս տեսավ Հ. Ի. Փափագյանի կազմած Մատենադարանի պարսկերեն վավերագրերի 1-ին գիրքը, որը բնագրվում է ԺԵ—ԺՁ դդ. հրովարտակները:

Հայաստանի պատմության, տնտեսական և ողիալական կյանքի բարդ և լրիվ շարժառանված հարցերի լուծման համար մեծ նշանակություն ունեցող այս պարսկերեն վավերագրե-

¹ Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Լ. Հրովարտակներ, պրակ առաջին (ԺԵ—ԺՁ դդ.), կազմեց Հ. Գ. Փափագյան, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1956, 315 էջ: